

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հարցազրույցը

«Արմենպրես» լրատվական գործակալությանը

- Մարզպետների կատարած աշխատանքների արդյունքներին տրվող տարեկան գնահատականով գործադիր մարմնի ներկայացուցիչների կողմից 2010թ. Ձեր գործունեությունը գնահատվել է 96,08 միավոր, որն ամենաբարձրն է հանրապետությունում: Ո՞րն էք համարում այդ բարձր գնահատականի գրավականը:

Այս գնահատականը տրվել է ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N562-Ն որոշմամբ սահմանված կարգով մարզպետների 2010 թվականի գործունեության գնահատման արդյունքում, որը համարում եմ Սյունիքի մարզպետարանի, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, մարզում գործող հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համատեղ ու արդյունավետ գործունեության արդյունք և սյունեցիների համար կարևոր ձեռքբերում: Ես գտնում եմ, որ այս կերպ գնահատվել է ոչ թե միայն իմ, այլ մեր բոլորի համատեղ աշխատանքը:

Եթե խոսելու լինենք գնահատականի գրավականի՝ հավաստիքի, երաշխիքի մասին, ապա կարծում եմ՝ գնահատականի գրավականը մեր բոլորի արդյունավետ աշխատանքն ու գործունեությունն է, որը մշտապես մեր ժողովրդի և կառավարության տեսադաշտում է, իսկ եթե այս գնահատականը համարենք գրավական, ապա այն իր հերթին երաշխիք է մեր հետագա գործունեության համար: Մակայն այս գնահատականը մեզ համար ընկալվում է ոչ թե երաշխիք, այլ պատասխանատվության մեծ զգացում և մեզ պարտավորեցնում է հետագայում էլ ավելի լավ աշխատելու, մարզպետարանի գործունեության արդյունավետությունն էլ ավելի բարձրացնելու՝ ի շահ մարզի զարգացման և մեր ժողովրդի բարեկեցության բարձրացման:

- Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրերից ո՞րն էք առավել կարևորում:

Զանգվածային լրատվության միջոցներով մենք բազմիցս նշել ենք Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N782-Ն որոշմամբ հաստատված, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մասին, որը համարում ենք մարզի զարգացման հիմնական ուղղությունները նախանշող փաստաթուղթ: Այս փաստաթուղթը մշակվել է Սյունիքի մարզպետարանում, արժանացել է կառավարության հավանությանը և հաստատվել վերջինիս կողմից: Ծրագրի նպատակն է մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված սոցիալական պաշտպանության, աղքատության հաղթահարման, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի, առողջապահության, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության, քաղաքաշինության, ճանապարհաշինության, տրանսպորտի, լեռնահանքային արդյունաբերության, էներգետիկայի, գյուղատնտեսության, բնապահպանության, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ բնագավառներում առկա մի շարք կարևորագույն խնդիրների լուծումը:

Առանձնապես կարևորում են նաև համայնքների կողմից ներկայացված առաջնահերթությունների ու մարտահրավերների՝ համայնքների առաջնահերթ հիմնախնդիրների լուծումը, որը շարունակական լուծում է ստանում:

Կարևոր են համարում նաև մարզի ծրագրում ընդգրկված և արդեն իսկ սկսված Տաթևի վանական համալիրի վերանորոգման, Հալիձոր-Տաթև ճոպանուղու, Գեղիի տարածքում լեռնահանքային նոր կոմբինատի, Մեղրու ՀԷԿ-ի, ինչպես նաև Իրան-Հայաստան երկաթուղու, Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու կառուցման աշխատանքները:

Թվարկված ծրագրերի իրականացումը կնպաստի մարզի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և գործազրկության մակարդակի իջեցմանը:

- Ո՞րոնք են մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրը և դրանց լուծմանն ուղղված ի՞նչ միջոցառումներ եք նախատեսել:

Մարզի առաջնահերթ խնդիրները շատ են ու տարաբնույթ: Նախորդ հարցի պատասխանում ես նշել եմ մարզի և համայնքների զարգացման ծրագրերի մասին: Ահա այս ծրագրերի իրականացման շրջանակներում էլ այս խնդիրներն աստիճանաբար լուծում են ստանում: Առավել առաջնահերթ խնդիրներից կարող են նշել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի հուլիսի 30-ի ՆԿ-128-Ն կարգադրությամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցում ներառված Սյունիքի մարզի մի շարք համայնքներում Հանրապետության Նախագահի նախընտրական հանդիպումների ժամանակ արժարժված հիմնախնդիրները, որոնց մի մասն արդեն լուծում է ստացել, իսկ մյուս մասն աստիճանական լուծում է ստանում:

Մասնավորապես կարող են նշել այս և նմանատիպ առաջնահերթություն պահանջող Կապան քաղաքի՝ 3.9կմ երկարությամբ Գ.Արզումանյան փողոցի հիմնանորոգումը, Մեղրի-Կապան նոր միջպետական ճանապարհից դեպի Նոնաձոր տանող 9 կմ ճանապարհահատվածի կառուցումը, Միջպետական Մ-2 մայրուղու Գորիս քաղաքով անցնող ճանապարհահատվածի վերանորոգումը, Պետ խճուղի-Քարահունջ ճանապարհի 2,3 կմ հատվածի հիմնանորոգումը, Խնածախ գյուղի 255, Վաղատուր գյուղի 105, Խոզնավար գյուղի 98, Սպանդարյան գյուղի 130, Անգեղակոթ գյուղի 380 տնտեսությունների զազիֆիկացումը, Կապանի երկրագիտական թանգարանի շենքի, Խնձորեսկ գյուղի ակումբի շենքի հիմնանորոգումը, Անգեղակոթ գյուղի դպրոցի շենքի, մշակույթի տան, Մեղրի քաղաքի հիվանդանոցի շենքի վերանորոգումը և այլ բազմաթիվ խնդիրներ: Կառավարության և մարզպետարանի կողմից համարժեք քայլեր են ձեռնարկվում այս խնդիրների լուծման ուղղությամբ: Թվարկված խնդիրների մի մասն արդեն լուծում է ստանում, մյուս մասի լուծումն ընթացքի մեջ է: Օրինակ, նշեմ վերջին խնդրի մասին՝ ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N1172-Ն որոշմամբ նախատեսվել է մինչև 2012 թվականի ավարտը «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ համար կառուցել նոր շենք:

- Անցած տարի, հիմնականում պայմանավորված բնակլիմայական անբարենպաստ պայմաններով, մարզի գյուղատնտեսության ոլորտում արձանագրված ցուցանիշները, մեղմ ասած, բավարար չէին: Այս տարի ի՞նչ միջոցներ եք ձեռնարկում գյուղացուն աջակցելու համար:

Չնայած բնակլիմայական անբարենպաստ պայմաններին, այնուամենայնիվ հետևողական աշխատանքի ու մասնագիտական ներուժի նպատակային կիրառման շնորհիվ

վերջին տարիների ընթացքում հաջողվել է մարզում ավելացնել գյուղմթերքների արտադրության ծավալները:

Նախորդ տարիների համեմատությամբ ֆերմերային տնտեսությունները ավելացել են 110-ով, գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունները՝ 58-ով:

Նախորդ տարիների համեմատությամբ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ավելացել է 4985, մանր եղջերավոր անասուններինը՝ 11623, խոզերինը՝ 3556 գլխով, ավելի քան 20 հազարով ավելացել է մեղվաընտանիքների քանակը:

Անհրաժեշտ պայմաններ են ստեղծվել սերմարտադրության, տնկարանային տնտեսության ընդարձակման, անասնապահության զարգացման համար:

2009-2010թթ. մարզի սերմարտադրող ֆերմերային տնտեսությունները, մարզի գյուղացիական տնտեսություններին և հարևան մարզերին ապահովել են 1610 տոննա աշնանացան ցորենի և 300 տոննա գարնանացան և աշնանացան գարու սերմանյութով շուկայականից էժան գներով:

Մեծ ծավալի ներդրումներ են կատարվել ոռոգման և ջրարբիացման նոր համակարգերի կառուցման ասպարեզում: Մաքրվել և վերականգնվել է 410կմ ոռոգման ջրագծեր:

Գյուղական համայնքներում վարչական ու մասնագիտական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու վարձակալության օպտիմալ եղանակների կիրառումը նպաստել է համայնքների բյուջեների հարստացմանը:

Որպես տնտեսություններին աջակցության օրինակ կարող եմ նշել, որ 2011թ. ՀՀ կառավարության կողմից Սյունիքի մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին հատկացվել է 116տ. գարնանացան գարու առաջին վերարտադրության սերմացու, 103տ՝ գարնանացան գարու էլիտա սերմացու, 1տ՝ եգիպտացորենի սերմացու: Մասնավոր ֆերմերի կողմից մարզ է ներկրվել 13տ կարտոֆիլի սերմանյութ: Մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու համար 2011թ. մարզ է ներկրվել 2400կգ ցինկի ֆոսֆիդ տեսակի թունանյութ: Մարզում ազոտական պարարտանյութի պահանջարկը կազմել է 500տ: Այսօրվա դրությամբ մարզ է ներկրվել 100տ /գործընթացը ընթացքի մեջ է/: Ազոտական պարարտանյութի ձեռքբերման ֆինանսավորման որոշակի մասը օգնության կարգով կկատարվի “Սյունիք-Չանգեզուր” բարեգործական հիմանադրամի կողմից:

Ճապոնիայի դրամաշնորհով Հայաստանի Հանրապետությանը տրամադրված և ՀՀ Սյունիքի մարզի համար նախատեսված 2 տրակտորները՝ իրենց համապատասխան գործիքներով հատկացվել են Խնձորեսկ և Բոնակոթ համայնքներին:

- Մարզի առողջապահական համակարգում ևս խնդիրներ կան, մասնավորապես բժիշկ-մասնագետների, բուժսարքավորումների կարիք ունեն մարզի բուժօգնականները: Այս տարի կա՞ն ծրագրեր ոլորտի հիմնախնդիրների լուծման համար:

Մարզի առողջապահական համակարգի խնդիրներն աստիճանաբար լուծում են ստանում: Այսօր բնակչությանը որակյալ բժշկական օգնություն ցուցաբերելու ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվել: Եթե մի քանի տարի առաջ դրված էր համակարգի պահպանման խնդիրը, ապա այսօր օրակարգում են համակարգի արդիականացման հարցերը:

2004-2010թթ. ընթացքում մարզում վերանորոգվել են գրեթե բոլոր գյուղական բուժկետերը, կառուցվել են նոր գյուղական ամբուլատորիաներ և մարզի առաջնային օղակի բոլոր բուժաստատությունները հագեցվել են բժշկական սարքավորումներով,

պարագաներով և կահույքով, ամբուլատոր պոլիկլինիկական օդակում կատարվել են մոտ 1.2 մլրդ դրամի ներդրումներ:

Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են Գորիսի ԲԿ ՓԲԸ հիմնանորոգման աշխատանքներ /1.0780 մլրդ դրամի ներդրումներ/: Կառուցվել է Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոնը, հիմնանորոգվել և հազեցվել է Տաթևի ամբուլատորիան/ 90մլն դրամ/:

2010 թվականին իրականացվել են 53.3 մլն դրամի հիմնանորոգման աշխատանքներ Կապանի, Սիսիանի և Մեղրիի տարածաշրջանային բժշկական կենտրոններում: 2010 թվականին մեկնարկել է Կապանի բժշկական կենտրոնի մանկական ծառայության մասնաշենքի հիմնանորոգումը, որը կավարտվի 2011 թվականին:

2011 թվականին կմեկնարկեն Կապանի բժշկական կենտրոնի հիմնանորոգման և Մեղրու բժշկական կենտրոնի նոր համալիրի կառուցման աշխատանքները:

2004-2010 թվականների ընթացքում մարզային ենթակայության առողջապահական հաստատությունները համալրվել են 907.0 մլն. դրամի բուժգործիքներով և սարքավորումներով: Բուժհաստատություններում ստեղծվել են նոր բաժանմունքներ և ծառայություններ:

2010թ. Գորիս քաղաքում շահագործվել է սրտաբանական կենտրոնը, ինչի արդյունքում մարզի բնակիչների համար հասանելի կդառնան բուժսպասարկման նորագույն մեթոդները և տեխնոլոգիաները:

Մարզի բուժհաստատությունների բժշկական կադրերի հազեցվածությունը, բժիշկների, հետդիպլոմային և շարունակական մասնագիտացման հարցերը մշտապես մեր ուշադրության կենտրոնում են: Բուժաշխատողների մասնագիտական պատրաստվածության և որակավորման բարձրացման նպատակով իրականացվել են մի շարք կրթական ծրագրեր: Նրանց ավելի քան 80 տոկոսն անվճար անցել է վերապատրաստման դասընթացներ: Ընտանեկան բժշկության մասնագիտացման ծրագրով մասնագիտացվել է 68 բժիշկ և 157 բուժքույր:

Շարունակական բնույթ է կրում նորավարտ բժիշկների մասնագիտացումը կլինիկական օրդինատուրայում: ՀՀ առողջապահության նախարարության կողմից պետական պատվերի շրջանակներում կլինիկական օրդինատուրայում մասնագիտացված 4 բժիշկներ, որոնց հետ կնքվել էր պայմանագրեր անցել են աշխատանքի մարզի բուժհաստատություններում: 2010թ. մարզպետի կողմից 8 բժիշկների տրվել են միջնորդագրեր կլինիկական օրդինատուրայում ուսուցումը պետական պատվերի շրջանակներում իրականացնելու համար: Ներկայումս մարզպետի կողմից տրված միջնորդությամբ և պայմանագիր կնքած 12 բժիշկներ մասնագիտացման դասընթացներ են անցնում ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտում:

Հիմնանորոգվել և ժամանակակից սարքավորումներով հազեցվել է «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ, այս տարի կսկսվեն «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ հիմնանորոգում և «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցման աշխատանքները: Աշխատանքային պայմանների բարելավումը, բուժաշխատողների աշխատավարձերի շարունակական բարձրացումը կխթանի երիտասարդ բժիշկների աշխատելը մարզի բուժհաստատություններում:

- Ինչպիսի՞ն է ընթացիկ տարվա առաջին եռամսյակում մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:

Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում Սյունիքի մարզի համայնքների բյուջեները կատարվել են նախատեսվածի 88,9 տոկոսով:

Սեփական եկամուտներն ընթացիկ տարվա առաջին եռամսյակում նախատեսվել էր 259 մլն 513 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 184 մլն 685 հազ. դրամ կամ նախատեսվածի 71,2 տոկոսը:

Գույքահարկի գծով մուտքերը կազմել են նախատեսվածի 80,7 տոկոսը, հողի հարկի գծով՝ 57,9 տոկոսը: Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարների հավաքագրումը կատարվել է 72,2 տոկոսով: Անցած տարվա նույն ժամանակահատվածում գույքահարկի գանձումների մակարդակն աճել է 52 տոկոսով, հողի հարկի գանձումները նվազել են 33 տոկոսով, իսկ հողի վարձավճարների հավաքագրումը՝ 2 տոկոսով:

Հողի հարկի գանձումների ցածր մակարդակը պայմանավորված է նրանով, որ տարվա այս սեզոնին զարնան գյուղատնտեսական աշխատանքներով զբաղված գյուղացու համար հեշտ չէ վճարումներ կատարելը, առավել ևս, որ անցած տարին խիստ անբարենպաստ է եղել գյուղատնտեսության համար: Հուսանք որ հաջորդ եռամսյակներին մարզում նկատելիորեն կաճեն հողի հարկի և հողերի վարձավճարների ցուցանիշները:

- Արտաքին կապերի աշխուժացմանը, մասնավորապես՝ մարզի տնտեսական շփումների ընդլայնմանն ու զարգացմանն ուղղված ի՞նչ ծրագրեր կան ընթացիկ տարում:

2005թ. հունիսի 29-ին ՀՀ Սյունիքի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Ատրպատականի նահանգի միջև կնքվել է համագործակցության փոխըմբռնման հուշագիր, որը նպաստում է երկու մարզերի միջև տնտեսական, առևտրային և մշակութային ոլորտների զարգացմանը:

Կազմվել և համապատասխան ընթացք ստանալու համար ՀՀ արտաքին գործերի նախարարություն են ներկայացվել Կապան ու Մարանդ, Մեղրի և Զուլֆա քաղաքները քույր քաղաքներ հռչակելու մասին համաձայնագրերի նախագծերը՝ համաձայնեցված Կապան և Մեղրի քաղաքային համայնքների կողմից:

2011թ. կարևորագույն ծրագրերից կառանձնացնեմ Մեղրու ՀԷԿ-ի կառուցման և Սյունիքի գյուղական համայնքի վարչական տարածքում զարգացման հնարավորությամբ արդյունաբերական գոտու ստեղծման ծրագրերը:

2011թ. ապրիլի 18-20-ը Երևանում կայացած հայ-ռուսական առաջին միջտարածաշրջանային արդյունաբերական ինովացիոն ցուցահանդեսի շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել կնքելու համագործակցության համաձայնագիր ՀՀ Սյունիքի մարզի և ՌԴ Չելյաբինսկի մարզի միջև:

Համագործակցության շրջանակներում նախատեսվում են նաև երկու մարզերի քաղաքային համայնքների միջև հաստատել քույր քաղաքների՝ հուշագրեր, որոնք կնպաստեն երկու մարզերի միջև առևտրա-արդյունաբերական, գիտատեխնիկական, զբոսաշրջության և մշակութային համագործակցության զարգացմանը:

30. 04.2011թ.